ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

02 փետրվարի 2026թ. **N 13-Ա**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԹԻՎ 4, 7, 12 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ ԱՆԴԱՄՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի ԹԻՎ 89-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Նախապատվության քվեակարգով Սոնա Կարապետի Հայրապետյանին նշանակել թիվ 4 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամ:
2. Նախապատվության քվեակարգով Արսեն Միքայելի Այվազյանին նշանակել թիվ 7 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամ:
3. Նախապատվության քվեակարգով Մանիկ Սոսի Խաչատրյանին նշանակել թիվ 12 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամ:
4. Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2022 թվականի դեկտեմբերի 2-ի «Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներ կազմավորելու և անդամներ նշանակելու մասին» թիվ 89-Ա որոշման՝

1) 4-րդ կետը լրացնել «Հայրապետյան Սոնա Կարապետի» բառերով,
2) 7-րդ կետը լրացնել «Այվազյան Արսեն Միքայելի» բառերով,
3) 12-րդ կետում «Դավթյան Գարիկ Պետրոսի» բառերը փոխարինել «Խաչատրյան Մանիկ Սոսի» բառերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Վ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**

2026 թվականի փետրվարի 2
ք. Երևան